ՀՀ ՆԳՆ ՄՔԾ Միգրացիայի և քաղաքացիության ոլորտի
քաղաքականության իրականացման
վարչության պետ Ի. Մկրտչյանին

12.08.2025թ.

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետի կողմից

կատարված աշխատանքների վերաբերյալ

(10.06.2025-12.08.2025թթ.)

Հարգելի՛ տիկին Մկրտչյան,

2025 թվականի հունիսի 10-ից 2025 թվականի օգոստոսի 12-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ՄՔՈՔԻ վարչության Ծրագրերի իրականացման և վիճակագրության բաժնում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Խմբագրել եմ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված որոշակի վիճակագրական տվյալներ ՀՀ քաղաքացիության, ԼՂ բռնի տեղահանված անձանց, անձը հաստատող փաստաթղթերի, սահմանահատումների ինչպես նաև օտարերկրացիների վերաբերյալ:
2. Համադրել և վերլուծել եմ տարբեր գերատեսչություններից ստացված, ինչպես նաև անձնական հետազոտությունների հիման վրա ձեռք բերված վիճակագրական տվյալները՝ ապահովելով տվյալների ամբողջականությունը, ճշգրտությունը և հաշվետու փաստաթղթերում դրանց համահունչ ներկայացումը:
3. Պատրաստել եմ վիճակագրական աղյուսակներ՝ ապահովելով դրանց համապատասխանությունը միջազգային և իրավական տերմինաբանությանը, ինչպես նաև իրականացրել եմ վիճակագրական ցուցանիշների խմբավորում և համադրություն ըստ թեմատիկ ուղղությունների:
4. Հետազոտել և ներկայացրել եմ միջազգային վիճակագրական աղբյուրներից ստացված տվյալներ՝ ՀՀ համատեքստում համադրությունների և համաշխարհային միտումների վերլուծության նպատակով:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետ՝ ------------------------------------------ Անի Հակոբյան

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ «-------------------»:

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ՄՔՈՔԻՎ պետ՝------------------------------ Ի. Մկրտչյան